

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՍԱՍՄԱ ՄՀԵՐ» ՊՈԵՄԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հ. Ս. ԱՐԵՂՅԱՆ

«Սասմա Մհեր» վիպերգի ստեղծագործական պատմության լուսաբանման տեսակետից շատ հետաքրքրական է 1922 և 1938 թթ. հրատարակությունների համադրումը, որոնք, ելնելով բանաստեղծի կատարած կառուցվածքային, դեղարվեստա-արտահայտչական, դեպքերի տրամաբանական ընթացքից, իսկ հիմնականում՝ Մհերի կերպարին վերաբերող փոփոխություններից, տարբերակներ են: Բանաստեղծը հանում, տեղափոխում կամ ավելացնում է որոշ դրվագներ, հատվածներ, բառեր, տեղանուններ, սակայն շատ նրբորեն ու տեղին, իսահակյանական իր խորիմացությունը ու վարպետությամբ և լավագույնին, կատարյալին հասնելու, իսկ հաճախ էլ ժողովրդական բնագրին ավելի մոտենալու միտումով: Եվ ակնհայտ է, որ այս իմաստով ավելի շահել է երկրորդ տարբերակը: Անդրադառնանք այն փոփոխություններին ու տարբերություններին, որոնք վերաբերում են Մհերի կերպարին:

Մեծ ուժի տեր է մանուկ դուցազնը, որը բանաստեղծն արտահայտում է հետևյալ կերպ.

Թեև Մհեր դեռ
Տղա էր, տխմար,
Իրեն ուժի տեր
Աշխարհ մարդ չկար:
(Ա տարբերակ)

Ա, Բ, Գ ինքնագրերը¹ սրա կրկնությունն են և միայն երկրորդ հրատարակության մեջ Իսահակյանը լիարժեք բառը գտնելով ոչ տեղին, դարձրել է ակառ, ավելի ընդգծել հերոսի բնատուր ուժը: Թույլ, անզոր երեխան ուժեղ է բոլորից, և այստեղ էլ չափազանցության մեջ չընկնելու համար բանաստեղծն աշխարհը փոխարինել է Սասունով:

Մհեր թեև դեռ տղա էր, ակառ,
Իրեն ուժի տեր Սասուն մարդ չկար:

Մհերն աչքի է ընկնում նաև իր հորից ժառանգած գեղեցկությամբ.

Հոր պես վեժ-հսկա,
Աչքերը բոց-հուր,
Մեջք ու բազուկներ
Պողպատիկ ու կուռ:
(Ա տարբերակ)

¹ Պայմանականորեն այսպես ենք համարակալել վիպերգի մեզ հասած ինքնագրերը, որոնցից Ա և Բ պահվում են բանաստեղծի ընտանիքի մոտ գտնվող արխիվում, իսկ Գ՝ Ե. Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ԱՎ. Իսահակյանի ֆոնդում:

Ա և Բ ինքնագրերում ավելացրել է՝ «Հոր պես վեմ հսկա հաղթ ու ազնա-
վուր», իսկ Գ ինքնագրում դուրս թողնելով վեմ հսկան ու հաղթը, գրել է՝ հոր
պես ազնավուր: Սակայն երկրորդ տարբերակում բանաստեղծը պատանու
նկարագիրը գեղարվեստորեն անհամեմատ ավելի արտահայտիչ դարձնելով,
նմանեցրել է արևային վահագնին («նա հուր հեր ուներ»):

Հոր նման պարթև, ալքերն ակն-արև,
Հայացքն՝ արծվենի, ճակատն՝ արթենի,
Մաղերը՝ բոց-հուր,
Մեջք ու բազուկներ պողպատիկ ու կոտ:

Հետաքրքրական է Մհերի բնավորության փոփոխությունը: Առաջին տար-
բերակում նա ներկայացվում է իր մեջ ամփոփված, բարկացկոտ, մարդկան-
ցից փախչող, մռայլ.

Խեն էր բնութքը, բորբ ու բարկացկոտ,
Օրերով խոժոռ, հոնքերը ժանգոտ,
Օրերով մենակ, ինքն իր հետ Մհեր՝
Մարդու չէր նայեր,
Մարդու չէր խոսար,
Մթար ու մլար՝
Հանց որ նեմրուք սար:

Ա ինքնագրում Իսահակյանը դարձրել է՝ հետք էր բնութքը, մնացածը
թողնելով նույնը, Բ ինքնագրում հատվածը սկզբում նույնությամբ թողնելով,
հետո մատիտով ջնջել է՝ «Մարդու չէր նայում, մարդու չէր խոսում» նախա-
դասութունները, որն ընդհանրապես արդեն բացակայում է Գ ինքնագրում:
Այստեղ նա աշխատել է որոշ մեղմացնող երանգ մտցնել, փորձելով հետք
դարձնել՝ խիստ, խոլ, ապա՝ վես, իսկ բոբբն ու բարկացկոտը՝ խիստ ու ցա-
կոտ: Սակայն, ի վերջո, ավելորդ գտնելով Մհերի բնավորության այդ գիծը,
հանում է, պատկերացնելով նրան այսպես.

Վես էր բնութքը, խոխտ ու ըմբոստ,
Հրով, խանդով վառ.

Եվ ապա ոչ թե ընդհանրապես, այլ՝

Ձայրույթի պանիճ՝ մթար ու մլար
Հանց որ նեմրուք սար:

Մեկ նախադասությամբ, երբեմն մի քանի գծերով Իսահակյանը բոլորո-
վին նոր գունավորում է հաղորդում Մհերի կերպարին. եթե առաջին մշակման
մեջ նա երբեմն ինչ-որ պարագաներում ավելի անօգնական է ու խեղճ, երկ-
րորդում զգում ենք նրա անհատականության ուժը, սեփական իրավունքների
հետզհետե աճող գիտակցումը: Հիշենք այն հատվածը, ուր Մհերն իմանալով
հորեղբոր մոտ գտնվող հոր ունեցվածքի մասին, գալիս է պահանջելու: Սկզբ-
նական տարբերակում Մհերը թեև բղավում է ճնճղափորիկի վրա, բայց նա
ասես խնդրում է և ոչ պահանջում՝

— Իմ հորըս ծովեն մեկ ափ ջուր չե՞ս տա:
Ու կիտեց հոնքերն իրարու վրա:

Ա ինքնագրում հատվածը նույնն է մնացել, մի աննշան տարբերությամբ,
որը և նախապատրաստում է հաջորդ փոփոխությունը.

— Իմ հորըս ծովին մեկ ասի շուր շե՛ս տա:

Ու լարեց վստահ

Աղեղն հեճեհրուն հորեղբոր վրա:

Բ, Գ ինքնագրերում, ինչպես նաև երկրորդ հրատարակության մեջ բոլորովին այլ բովանդակություն է ստանում Մհերի խոսքը: Նա չի բղավում, այլ «լցված սրտով» է խոսում հորեղբոր հետ՝ գիտակցելով արդեն իր իրավունքները՝ որպես օրինական ժառանգ:

— Ես լինե՛մ Սասմա ժառանգ ու իշխան,

Ինձ էսպես ձգես ուրիշի դռա՞ն...

Բնականորեն Իսահակյանը երկրորդ տարբերակում Մհերին դարձրել է ավելի ակտիվ ու ըմբոստ, ավելացրել նրա բողոքն ու զայրույթը շրջապատի անարդարության դեմ: Հիշենք հորեղբոր հետ ունեցած Մհերի ընդհարման վերջ հիշած դրվագի շարունակությունը: Ինչպես առաջին տարբերակում, այնպես էլ Ա, Բ, Գ ինքնագրերում հորեղբայրը զայրանում է Մհերի վրա, ծեծում ու տանից դուրս է անում:

Լախտն առավ Մհեր, որ զարկեր ճրան,

Ձեռք չզգնաց հորեղբոր վրան:

Մի հետաքրքրական նրբերանգ է ներմուծել Իսահակյանը երկրորդ հրատարակության ժամանակ. արտաքինից գուցե և ո՛չ էական թվացող մի տարբերությամբ նա ավելի է ընդգծել Մհերի ներքին զայրույթը և միաժամանակ նրա անսահման բարի էությունը: Հորեղբոր ոչ մարդկային վերաբերմունքը նրան դուրս է բերում հավասարակշռությունից այնպես, որ նա ալատեղ արդեն երկրորդ անգամ է փորձում ձեռք բարձրացնել Ճնճղափորիկի վրա, բայց այս անգամն էլ չի կարողանում վիրավորել իր խնամակալ-ազգականին:

Լախտն առավ Մհեր, որ զարկեր ճրան,

Ձեռք չզգնաց հորեղբոր վրան:

< >

Ետ դառավ Մհեր, որ զարկեր ճրան,

Նորեն Մհերի ձեռքը չզգնաց

Հորեղբոր վրան:

Պոեմի երկրորդ մշակման ժամանակ բանաստեղծն էպոսային դյուցազն Մհերին որոշ դեպքերում ավելի մարդկայնացրել է, դրել ունալ հողի վրա, ավելացրել նրա ակտիվությունը, ըմբոստությունը՝ չարի դեմ, դրանով, անտարակույս, գաղափարապես ավելի ուժեղացնելով կերպարը: Տրամաբանական է, որ մեծ մասամբ այնտեղ, ուր Մհերը բախվում է կյանքի լավ ու վատ պայմաններին, ճանաչում իրականությունը, Իսահակյանը աշխատում է նրան ավելի մարդկային կերպարանք տալ, ազատել հեթաթային չափազանցություններից, հիպերբոլաներից:

Հակառակ որոշ քննադատների՝ Մհերի կերպարի մոդեռնացման վերաբերյալ արած դիտողության, Իսահակյանն ավելի ուժեղացրել է սոցիալական անարդարության դեմ հերոսի բողոքի ու ընդվզման փաստը: Ահա այն դրվագը, ուր ուսուր թագավորի գլխահարկն է պահանջում Մհերից և վերջինս զայրացած հրաժարվում է.

Խեսը ձենեց, ձենին եկան

Գեղ-գեղովի, գեղովի ոսմիկ.

— Կապե՛ք, ասաց, կապե՛ք ձեռ ոտ,
ծրկաթ զարկե՛ք, տարե՛ք ձգե՛ք
Մուկ բռնատուն:
(Ա տարբերակ)

Այս հատվածի ինքնագրերում, ինչպես նաև երկրորդ տարբերակում ա-
վելացված է երկու տող, որը ուշագրավ է կոլորիտային առումով:

Ուտերով վար՝ փռկ ու ճռպան,
Անթերու տակ՝ բիր ու մաճակ²:

Սրան հետևող մի հատված երկրորդ տարբերակում նպաստում է Մհերի
կերպարի մեջ ըմբոստություն գծի ավելի ուժեղացմանը: Այդ հատվածը չկա
ո՛չ առաջին հրատարակության մեջ և ո՛չ ինքնագրերում: Այն Մհերի հետզհե-
տե աճող բարկության պոռթկումն է:

— «Վա՛յ ձեզ, ճորտեր խեղճ ու տխմար,
Վերցրել եք զեն՝
Թափվել վրաս, հանց ձեր ահեղ
Թշնամու դեմ...
Մեկդի՛ քաշվեք, մեկդի՛ հիմի
Ճամփա՛ տվեք, թող ռեսը գա,
Թագավորի հարկը տանի...
Ասավ Մհեր,
Ու անառիկ բերդի նման
Կանգնավ մնաց:

Հետաքրքրական է նույն դրվագում կատարված մեկ այլ փոփոխություն
ևս. առաջին տարբերակում Մհերը լախտը քաշում է, զարկում տանուտերին
և «յոթ օրվա մեռելի պես» փռում դետին: Ապա նորից է լախտը շարժում.
«Ժեռուտ քարից մի կտոր պոկվում է և սկսում է թռչել՝ հուր-հավիտյան»:

Բ, Գ ինքնագրերում, ինչպես նաև վիպերգի երկրորդ հրատարակության
ժամանակ Խաչակյանը որոշ իմաստային փոփոխություն է վատարել. սկզբը-
նական տարբերակում Մհերը դիտավորյալ է սպանում տանուտերին, երկրոր-
դում վիճակը այլ է՝

Մհեր հոնքեր ժողվեց իրար,
Լախտը փարտեց,
Մայրը լախտին դիպավ սանդին,
Աղասանդը փրթավ տեղեն,
Թռավ զնաց՝ կրակ կտրած,
Ու կթռնի մինչի հիմի:
Շորշոփն ճգար՝ լաբած լախտին,
Շանթի նման փռեց գետին,
Փռեց գետին գեղապետին
Յոթըն օրվա մեռելի պես:

Այնուհետև բանաստեղծը դիմել է մեկ այլ փոփոխության, որ տրամաբա-
նորեն բխում է նախորդից. առաջին տարբերակի՝

«Ժեռուտ քարեն մի փերթ փրթավ,
Թռավ, զնա՛ց,

² Ա ինքնագրում՝ «Ուտերն ի վար փռկ ու ճռպան
Անթերու տակ բիր ու [նակալ] մահակ,
Ագուտներն՝ մուրն ու կըռան:

Կերթա՛, կերթա՛ հուր-հավիտյան:
 Լախտը փարտեց. ջարդեց, թափեց,
 Ինչ որ ընկավ լախտի բերան.
 Մնացածներ գումար փախան,
 Յրիվ եկան,
 Խորիվ եղան:

Հատվածից նա հանել է ընդգծված տողերը, թողնելով հետևյալը.

Ժռուտ քարեն մեկ փերթ փերթավ,
 Փերթավ գընաց՝ կըրակ կտրած՝
 Կերթա՛, կերթա՛ նար-հավիտյան:
 Գեղ-գեղավի էս որ տեսան՝
 Հանցոր խրոփվ քամու բերան՝
 Գումար թըռան՝
 Ձուռ ու ծործոր ջունչերե առան:

Բ և Գ ինքնագրերում նա արդեն փոխում է նաև տանուտերի հետ կապված մանրամասը և այդպես հրատարակում: Իսկ այս հատվածը՝ Գ ինքնագրում և երկրորդ հրատարակության մեջ նույնն է, աննշան տեքստային տարբերություն ունի միայն Բ ինքնագրի:

Մհերի վարմունքն այստեղ մեղմելով, մարդկանց անողորմ ջարդել-թափելու հանգամանքը իսահակյանը տարել է պոեմի վերջը, ուր Մհերը ճակատագրական կովի է դուրս գալիս Սասնա տան շրջերի» հետ: Այստեղ, ինչ խոսք, ավելի պատճառաբանված է իր գաղաթնակետին հասած Մհերի զայրույթի բռնկման այգորինակ լուծումը և պարզ է, որ իրավիճակի կրկնությունը կարող էր թուլացնել հատվածի անհրաժեշտ տպավորությունը: Ինքնագրերից երևում է, որ այն եղել է բանաստեղծին ամենից շատ զբաղեցնող դրվագներից մեկը: Առաջին հրատարակության համեմատ երկրորդում այն մեծ փոփոխություն է կրել և վերջինս շահել է թե՛ գաղափարական, թե՛ գեղարվեստա-արտահայտչական ու կոլորիտային տեսակետից:

Ա ինքնագրում Ջոջ տան պետերը ո՛չ թե միանգամից են հարձակվում Մհերի վրա, այլ սկզբում նախազգուշացնում են, աշխատելով համոզել, դարձի բերել նրան: Սակայն անօգուտ է. Մհերի բարկությունը հասել է իր գաղաթնակետին, և հատվածի ավելացումով իսահակյանն ավելի է ընդգծել այգ: Ջգուշացումներն ու սպառնալիքները չեն ազդում հանուն արդարության պայքարելու պատրաստ դյուցազնի վրա.

Մհեր կեցավ անպատասխան
 Անպատասխան — լեռ անսասան:

Բ ինքնագրում հատվածը նույնն է. Գ ինքնագրին ծանոթանալիս պարզվում է, որ հանելու նպատակով որոշ տողեր ընդգծված են: Այդպես է վարվել բանաստեղծը նաև պոեմի երկրորդ հրատարակության ժամանակ: Հակառակորդների խոսքը դարձրել է ավելի հավաք, խիստ ու ազդու, մանավանդ վերջից կրճատելով «Լույս պապերիդ նաւփով գընա» և դրան հաջորդող տողերը, որոնք որոշ իմաստով թուլացնում էին տպավորությունը:

Պոեմի երկրորդ հրատարակության ժամանակ բանաստեղծը կատարել է այս դրվագի ամենակարևոր փոփոխությունը. նախ, առաջին հայացքից գուցե և աչքի չընկնող մի արտահայտությամբ, որը չկա ինքնագրերում և, առավել ևս, առաջին տարբերակում, նա ավելի ընդգծել է, թե ով է Մհերի թշնա-

մին, հասարակ ժողովուրդը իր կամքով չէ, որ ելնում է նրա դեմ, այլ նա մեծ մասամբ կույր կամակատարն է իշխանների, հարուստների.

< >

Ոստանիկներ ու Սեպուհներ,
Ու Աղատներ ու Ավատներ,
Հագած-կապած վերտ ու վահան,
Սուր ու աշտե, տեգ ու նիզակ,
Իրենց առջևն առած-քերած
Հոծ ժողովուրդ— գեղ ու փաղ,
Գեղջուկ, մշակ, ճորտ ու ոսմիկ,
Հագած-կապած զրահ-շապիկ...

Բոլորովին նոր մի հատվածով բանաստեղծը մեկ անգամ ևս հավաստում է, որ դեպքերի ազդեցության տակ Մհերը հասունանում է գաղափարապես, նա արյուն է թափում, սակայն ո՛չ հասարակ ժողովրդի, «խեղճ ու կրակ» ոսմիկի, այլ իր իսկական թշնամիների, որոնց նա արդեն ճանաչել է:

Ա ինքնագրում արդեն իսահակյանն աշխատել է ավելի խտացնել գույները և ավելացրել «այլել, քափել» արտահայտություններ: Ի դեպ, ժրագրային գրառումներում նշում կա այն մասին, որ պետք է փոխել Մհերի կողմից արյուն թափելը. «Աստուծոյններին կոտորելը մեղմել: Ոչ թե կտրեց, թափեց, լափեց, արյունն ելավ գոչ-գոչ գնաց»³: Ասակայն փաստերը ցույց են տալիս, որ այն պահպանել է, փոխելով իրադրությունը, որի հետևանքով Մհերի գործողությունն արդեն դիտվում է որպես ծայրահեղ ըմբոստություն և ո՛չ դաժանություն արտահայտություն: Հաջորդ դրվագում իսահակյանը նորից հաստատում է այն միտքը, որ ժողովրդին ոտքի հանողները տիրողներն են՝ իշխանները, շոքերը, ժամերեցները...⁴

Սև լուրն ընկավ Սասմա ախանջ,
Ելան ժամի կոչնակ տվին
Ու շորս դիեն՝ ծեր-հալկոր...
(Ա տարբերակ)

Սև ագռավի մռայլ կառանջ՝
Սև լուրն հասավ Սասմա ախանջ,
Իջևան, ջոջեր, ժամերեցներ
Ելան ժամի կոչնակ տվին.
Ու շորս դիեն ծեր-հալկոր...
(Բ տարբերակ)

Մհերն իր հայտնի եզրակացություններին հանգում է ականատես լինելով ոսմիկի չարքաշ կյանքին, ինչպես արտհունձի դրվագում, որը գրողացու դառը ճակատագրի պերճախոս նկարագիրն է:

Այս և նման փաստերն են մտածմունքի տեղիք տալիս Մհերին և նա օր ու գիշեր խորհում է՝

— Ռամիկ, գեղջուկ
Ամբար-մառան

³ Ավ. Իսահակյանի արխիվ (պահվում է բանաստեղծի ընտանիքի մոտ):

⁴ Ավելացումը կատարված է միայն երկրորդ հրատարակության ժամանակ:

Կը լեցնե՞ք դուք
Իշխաններուն ու պարոնին
Ու կը մնաք նորեն-նորեն
Մերկ ի մորեն...

Ինքնագրերը և երկրորդ տարբերակը, չնչին տարբերությամբ, նույն միտքն են արտահայտում:

Պոեմի երկրորդ մշակման ժամանակ ավելի մեծ փոփոխություն է կատարված այն դրվագում, ուր Մհերը վկա է դառնում նաև շինարարության վրա աշխատող բանվորի վայր ընկնելուն ու ջարդվելուն: Առաջին տարբերակում Սասնա տան ժառանգը բավականանում է տրտունջի մի քանի խոսքով և հեռանում քաղաքից՝

Մհեր էս տեսավ,
«Ա՛խ» քաշեց, ասավ.
Ռամիկ անտուն մարդ
Դարպաս կըշինե,
Ու իրեն համար
Անտապան հողվար...

Ճանապարհին հանդիպելով Փաղատ ու անպարտ» վայրի հավքերին, Մհերը երանի է տալիս նրանց ու ալեկոծ հոգով «դառնում ասում իրեն սրտին ու աշխարհին».

— Ռամիկ դատի՛,
Աշխարհ ուտե,
Նորեն մնա
Ինքն անոթի՞...
Ռամիկ գեղջուկ
Ձեր խեղճ խելքի
Կորածն եք դուք.
Թե որ տեր դառնաք
Ձեր իրավունքին—
Ձեր աշխատանքին,
Մեկեն կըլքին
Հարուստ ու իշխան
Աշխարհիս վրան:
Երթամ շինեմ
Բերդ ու պատվար
Նեղ ու դժվար
Օրվա համար.
Իշենեմ մեր տուն՝
Առնեմ իմ հոր
Ջենքեր բոլոր—
Թուր-կայծակին.
Հրեղեն Ձին.
Ելնեմ աշխարհ ողջ ավերեմ,
Ռամկություն բերեմ,
Ռամկի իրավունք:

Երկրորդ մշակման ժամանակ Իսահակյանն ավելի հարմար է գտել այս ե. նախորդ հատվածները, որոշ փոփոխություններով, միացնել, որից, իհարկե, հերոսի կերպարը դառնում է գաղափարապես ավելի ակտիվ ու հասուն: Այս դրվագում է, որ Մհերը հանգում է աշխարհի վերափոխման մասին իր հայտնի գաղափարին, ուստի բանաստեղծը ձգտել է այն դարձնել առավել

արտահայտիչ, հասնել լավագույն տարբերակին: Դրա մասին են վկայում ինքնագրերում առկա բազմաթիվ շտկումները, ուղղումները, որոնց հիման վրա էլ կատարված է երկրորդ հրատարակությունը: Իսահակյանն այստեղ Մհերի խոսքը վեր է ածում մշակին, ճորտին, բանվորին ուղղված մարտակոչի: Մհերը զգում է, որ այդ մարդիկ, որ «դուրք-ու դարպաս են շինում», իրենց համար պատրաստում են լուծ ու անուր, զնդան ամուր: Մհերն այստեղ պատկերված է լի հավատով, որ ինքը մենակ չէ, որ նրան կօգնեն իր դժվար գործում: Այստեղից էլ բխում է հատվածի վերջավորությունը, որը և՛ գեղարվեստական, և՛ հատկապես, գաղափարական տեսակետից ավելի լիարժեք է, քան առաջին տարբերակում:

Եվ տրամաբանորեն սրանից բխում է հատվածի վերջավորությունը, որը և՛ գեղարվեստական, և՛ հատկապես, գաղափարական տեսակետից ավելի լիարժեք է, քան առաջին տարբերակում:

Ելնենք գուպար
Աշխարհի դեմ զրկող ու լար-
Ողջ ավերենք
Ու ոսկություն բերենք աշխարհ,
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ոսմիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին:

Մհերի կերպարի գաղափարական ուժեղացման մասին է վկայում երկրորդ մշակման ժամանակ ավելացրած մեկ այլ մանրամաս: Մհերն ընդմիջտ բանտարկված է Ազոավաքարում՝

Մեջ քարայրին անմահ, անմեռ,
Կա ու կապրի Սասմա Մհեր-
Ո՛չ լաց կույա, ո՛չ կզղջա,
Որ Քրիստոս խղճա, գթա,
Թողություն տա:

Այսպես է առաջին տարբերակում: Սակայն պոեմի երկրորդ մշակման առաջին իսկ փորձերն անելիս բանաստեղծն այստեղ ներմուծել է մի կարևոր նրբերանգ. Մհերը փակված է այրում, բայց նրան հանգիստ չեն տալիս մտածումներն աշխարհի, կյանքի մասին:

Ու կըմտֆե անմահ Մհեր
Աշխարհի բան-
Աշխարհի բան հաճեց որ իծ-օծ,
Կը խեղճե սիրուն ու հոգին:
Ու ո՛չ կույա, ո՛չ կը զղջա,
Որ Քրիստոս խղճա-գթա,
Վեա արարքին թողություն տա:

Այս դրվագում նկատենք մեկ այլ կարևոր փոփոխություն ևս, նորից ի ապացույց այն բանի, որ բանաստեղծն աշխատել է հարազատ մնալ ժողովրդական բնագրին: Ավելացումը կատարված է Ա ինքնագրում, պահպանվել է Բ, Գ ինքնագրերում, և կիրառվել է պոեմի երկրորդ հրատարակության ժամանակ: Խոսքը վերաբերում է դրվագի ավարտին:

Մեջ անձավին անմահ, անմեռ,
Կա ու կապրի Ցասմա Մհեր:

Դիտու վերև—նրսեմ ճրագ՝
Գիշեր-ցերեկ ճավիտյան վառ.
Խմած ջուրը՝ մեկ ըսկաճակ,
Հացը օրեն՝ երեք ճշխար:
Մեկ խմուճ առույտ Ձիու առաջ
Ամառ-ձմեռ դալար-կանաչ:

Բանաստեղծն այստեղ օգտագործել է Երվանդ Լալայանի 1905 թ. գրի առած «Սասնա ծռեր» պատումի հետևյալ փաստը.

Իրան ուտվածքն օրական իրեք նշխարք ա.
Երկու կուշտը մեկ մեկ մոմ վառուկ ա՝ գիշեր,
ցերեկ,
< >
Ձիան յոնջեն առեջն ա,
Ամառ-ձմեռ կանանչ ա:

Իսահակյանը պոեմի երկրորդ մշակման ժամանակ ավերի շատ է օգտագործել Մհերի կերպարը բնորոշող մակդիրներ, երբեմն հիշեցնելով նաև հերոսի դիցաբանական ծագումը: Այսպես օրինակ՝ «Ազնաճուր Մհեր չվեց ու հասավ Պղնձե քաղաք», «Հեծավ Մհերն առևազուն...», «Ու կմտքե անմաճ Մհեր աշխարքի բան», «Նշուվք արին զոռ Մհերին», «Երբ ռամկասեռ Մհերը վեա...», «Կա ու կապրի Ցասման Մհեր», «Ազնաճ Մհեր լախտն առավ ձեռ», «Աշխարքի բան միտք կաներ միտք Ջոջանց Մհեր»:

Իսահակյանը որոշ դեպքերում դիմում է նաև փոփոխությունների ու շրտկումների՝ տրամաբանական այս կամ այն ելակետից, մեկ անգամ ևս հաստատելով միջնադարյան կյանքին և այն պատկերող էպոսին հարազատ մնալու իր սկզբունքը:

Այսպիսով, Իսահակյանի հարուստ արխիվի նյութերի ուսումնասիրությունը մեզ բերում է այն եզրակացություն, որ բանաստեղծը, «Սասնա Մհեր» պոեմի առաջին տարբերակից մինչև հիմնական տեքստի ավելոցումը (1938 թ.) կատարել է շատ կարևոր փոփոխություններ, որոնցով պոեմը շահել է ոչ միայն գաղափարապես, այլև գեղարվեստական տեսակետից:

ИЗ ТВОРЧЕСКОЙ ИСТОРИИ ПОЭМЫ А. ИСААКЯНА «САСМА МГЕР»

А. С. АБЕГЯН

Резюме

Изучение богатого архива А. Исаакяна выявляет интереснейшие стороны творческой истории поэмы «Сасма Мгер». Начиная от первого варианта до основного текста поэмы (1938), поэт внес ряд изменений, касающихся ее художественно-выразительных средств, архитектурники, логического хода событий. В центре внимания автора всегда оставался образ Мгера, в котором он последовательно углублял основные черты героя народного эпоса—бунт против социальной несправедливости, свободолюбие, гуманизм. В процессе этих изменений поэма значительно выиграла не только с точки зрения своего идейного содержания, но и художественной.